ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2021 թվականի №Ա
ք. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ №1/14 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի նոյեմբերի 10-ի №Ե-681-21 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված՝ Երևան քաղաքի Պարույր Սևակի փողոցի №1/14 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ Բազմաբնակարան շենք) բնակարանների սեփականատերերի կողմից լիազորված անձ Կարինե Սաթամյանի (այսուհետ՝ Լիազորված անձ) 2021 թվականի հոկտեմբերի 27-ի դիմումը՝ Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ, որտեղ Լիազորված անձը, ելնելով կառուցապատողի բացակայության փաստից, համաձայնել է Բազմաբնակարան շենքի սպառման հակամարգն էլեկտրական ցանցին միացնելու հարաբերություններում ստանձնել վերջինիս պարտավորությունները և կատարել համապատասխան վճարումները,

բ) Լիազորված անձի 2021 թվականի նոյեմբերի 29-ի և Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի №Ե-755-21 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Բազմաբնակարան շենքի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների

(այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու նպատակով Կանոնների 13.2 կետով սահմանված դիմումը ներկայացնում, Ընկերության հետ կառուցվող Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու պայմանագիր կնքում, միացման վճար վճարում և վճարումը հավաստող փաստաթղթերն Ընկերություն է ներկայացնում Լիազորված անձը.

2) Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու վճարը հաշվարկվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև Բազմաբնակարան շենքը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 290 օրը.

4) չի թույլատրվում Լիազորված անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ պայմանագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիազորված անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
դեկտեմբերի 2021թ.